Դեցիս

Ազդող նյութը՝ դելտամետրին 25 գ/լ
Պատրաստուկային ձևը՝ խտացված էմուլսիա
Փաթեթավորումը՝ 1լ, 5 լ

Դեցիսը ազդեցության լայն շրջանակով, սինթետիկ պիրետրոիդների խմբին պատկանող կոնտակտ-աղիքային ազդեցության ինսեկտիցիդ է:

Ամբողջ աշխարհում Դեցիսը միակ պիրետրոիդն է, որի ազդող նյութը (դելտամետրին) կազմված է մեկ ակտիվ իզոմերից: Այլ պիրետրոիդների ազդող նյութերը կազմված են երկու և ավելի իզոմերներից, որոնցից միայն մեկը կարող է լինել ակտիվ: Ակտիվ իզոմերները ճշտորեն ուղղված են դեպի վնասատուների զգայուն մասերը, որով և պայմանավորված է պատրաստուկի առավելագույն ակտիվությունը: Մյուս իզոմերները արդյունավետ չեն և շրջակա միջավայրում նրանց երկարատև ներկայությունը ամենևին ցանկալի չէ: Դեցիսի ազդող նյութը հենց առավելության շնորհիվ է ապահովում առավելագույն կենսաբանական արդյունավետություն:

Ազդեցության մեխանիզմը

Դեցիսը ազդում է կոնտակտ-աղիքային ճանապարհով և ոչնչացնում է վնասատուներին՝ ազդելով նրանց նյարդային համակարգի վրա: Բացի այդ, որոշ տեսակի վնասատուների հանդեպ, պատրաստուկը ցուցաբերում է վախեցնող և վանող լրացուցիչ էֆեկտ:

Դեցիսը բաքային խառնուրդների ձևով կարելի է կիրառել շատ հերբիցիդների, ինսեկտիցիդների, ֆունգիցիդների և պարարտանյութերի հետ՝ բացառությամբ ուժեղ հիմնային պատրաստուկների: Սակայն յուրաքանչյուր դեպքում խորհուրդ է տրվում նախօրոք ստուգել նրանց քիմիական համատեղելիությունը:

Առավելությունները

- Բարձր արդյունավետություն
- Կիրառման մեծ շրջանակ
- Արագ ազդեցություն
- Անձրևաջրերի հանդեպ բարձր կայունություն

Մշակաբույսի անվանումը	*Վնասատու*	*Պատրաստուկի ծախսի նորմա*	*Աշխատանքային լուծույթի ծախսի քանակը*	*Սպասման ժամկետը (սրսկումների քանակը)*
Հացահատիկ	Վնասակար կրիայիկ, լվիճներ, թրիփսներ, հացաբզեզներ	0.25	200-400	20 (2)
	Հացաճանճեր	0.2		20 (1)
	Հացաբույսի բվիկ	0.3		
Եգիպտացորեն	Բամբակենու բվիկ	0.5-0.7	200-400	20 (2)
	Եգիպտացորենի ցեց	0.5		
Գարի	Հացաբույսերի լվիկներ, հացաճանճեր	0.2	200-400	20 (1)
Արևածաղիկ	Մարգագետնի հրաթիթեռ	0.1-0.15	200-400	20 (2)
Կարտոֆիլ	Կոլորադյան բզեզ	0.1-0.15	200-400	
	Կարտոֆիլի ցեց	0.2		
Ոլոռ	Ոլոռի ցեց	0.2	200-400	30 (2)
Լոլիկ	Հողաբնակ բվիկներ,	0.25-0.5	200-400	30 (1)
	Կոլորադյան բզեզ	0.15		
Կաղամբ	Բվիկներ, ցեցեր, կաղամբի ճերմակաթիթեռ, լվիկներ	0.3	200-400	20 (2)
Խնձորենի	Պտղակեր	0.5-1.0	1000-1500	30 (1)
Տանձենի	Տանձենու լվիկ	0.6		
Խաղող	Ողկուզակեր	0.4-0.6	600-1200	
Գազար	Գազարի ճանճ, գազարի տերևների լվիկներ	0.3	200-400	20 (1)
Ծխախոտ	Լվիկներ	0.5	400-600	15 (1)
Դեղձենի	Արևելյան պտղակեր	0.5	800-1200	20 (2)
Սեխ, ձմերուկ	Հողաբնակ բվիկներ	0.25-0.5	200-400	Սրսկել գարնանային շրջանում